ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վիգեն Քոչարյանի՝ սեպտեմբերի 6-8-ը Նորվեգիայի Թագավորություն գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Վիգեն Քոչարյան:

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Նորվեգիայի Թագավորություն (Օսլո), 2017թ. սեպտեմբերի 6-ից 8-ը:

Հրավիրող կողմը՝ Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն «Խաղաղ, արդար և ներառական հասարակությունների մշտադիտարկման և հաշվետվությունների առաջընթացը» խորագրով աշխատաժողովին:

Քննարկված թեմաները՝ Օրակարգ 2030-ին և Կայուն զարգացման 16-րդ նպատակին առնչվող հարցեր, որոնք վերաբերում են խաղաղ, արդար և ներառական հասարակությունների մշտադիտարկմանը և առաջընթացի վերաբերյալ հաշվետվություններին:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2017թ. թվականի սեպտեմբերի 7-ից 8-ը Օսլո քաղաքում (Նորվեգիայի Թագավորություն) կայացել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից համատեղ կազմակերպված «Խաղաղ, արդար և ներառական հասարակությունների մշտադիտարկման և հաշվետվությունների առաջընթացը» խորագրով աշխատաժողովը, որին մասնակցել է 2017թ. փետրվարի 21-ին ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակներ» համաշխարհային գործընթացի հայաստանյան աշխատանքները կանոնակարգելու նպատակով ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված միջգերատեսչական

հանձնաժողովի անդամ, ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակների» Իրավական և ժողովրդավարական հավասարության ենթախմբի համանախագահ, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը:

Օսլոյում կայանացած «Խաղաղ, արդար և ներառական հասարակությունների մշտադիտարկման և հաշվետվությունների առաջընթացը» խորագրով աշխատաժողովի ընթացքում քննարկվել են խաղաղ, արդար և ներառական հասարակությունների մշտադիտարկման և հաշվետվությունների առաջընթացի վերաբերյալ այն հարցերը, որոնք առնչվում են Օրակարգ 2030-ի և Կայուն զարգացման 16-րդ նպատակի հետ:

Աշխատաժողովի ընթացքում քննարկվել է նաև ՄԱԿ-ի կայուն զարգացման 16-րդ նպատակով սահմանված թիրախների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման մեթոդաբանությունը և գործիքակազմը: Վերջինիս քննարկումը աշխատաժողովի մասնակից պետությունների ներկայցուցիչներին հնարավորություն է ընձեռել առավել համապարփակ ներկայացնելու խաղաղ, արդար և ներառական հասարակություններին հասնելու՝ պետությունների կողմից գործադրած ջանքերը:

«Խաղաղ, արդար և ներառական հասարակությունների մշտադիտարկման և հաշվետվությունների առաջընթացին» նվիրված աշխատաժողովի ընթացքում ներկայացվել է Հայաստանում ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակաների ազգայնացման գործընթացը, մասնավորապես, «Կայուն զարգացման նպատակներ» համաշխարհային գործընթացի հայաստանյան աշխատանքները կանոնակարգելու նպատակով ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնա-ժողովի գործունեության ուղղությունները: Աշխատաժողովի ընթացքում անդրադարձ է կատարվել ԿԶՆ 16-ի թիրախների և ցուցիչների ազգայնացման աշխատանքներն առավել ներառական և արդյունավետ դարձնելու նպատակով ստեղծված համապատասխան աշխատանքային խմբի գործունեությանը և վերջինիս կողմից կատարված աշխատանքներին: Աշխատաժողովի մասնակիցներին ներկայացվել է

նաև աշխատանքային խմբի կողմից կազմված՝ ԿԶՆ 16-ի թիրախների և ցուցիչների ազգայնացման վերաբերյալ համապատասխան զեկույցը: Օսլոյում տեղի ունեցած քննարկումները կնպաստեն Հայաստանի Հանրապետության կողմից 2018թ. ընթացքում ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակների» կատարման ընթացքի վերաբերյալ կամավոր զեկույցի, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության համակարգման ներքո գտնվող ԿԶՆ 16-ի թիրախներին և ցուցիչներին առնչվող հաշվետվությունների նախապատրաստական աշխատանքերն առավել արդյունավետ դարձնելուն: